ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ՝ ԱՍՏԾՈ ՔԱՄԻՆ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.7-8

7 Մի՛ զարմացիր, որ քեզ ասացի. Դուք պետք է վերստին ծնվեք:
8 ***Քամին ուր ուզում է, փչում է****, և* ***նրա ձայնը լսում ես****, բայց չգիտես, թե որտեղի՛ց է գալիս և ո՛ւր է գնում. այդպես է և Հոգուց ծնված ամեն ոք:*

Եբրայերենում «հոգի», «շունչ» և «քամի» բառերը հաճախ նույն բառն են՝ רוּחַ *(Ruach / Ռուախ)*

Ծննդոց 1.2 – Աստծու ***Հոգին*** *շրջում էր ջրերի վրա:*

Ծննդոց 2.7 – Տեր Աստված մարդուն ձևավորեց հողի փոշուց և նրա ռունգերի մեջ կենդանության ***շունչ*** *փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ:*

Երբ դու խոսում ես, քո բերանից ոչ միայն բառեր են դուրս գալիս, այլ դրանք խառնված են նաև քո շնչի հետ:

Աստված Իր խոսքով արարեց երկինքն ու երկիրը, և Նրա շունչը կյանք տվեց երկրին:

8 ***Քամին ուր ուզում է, փչում է, և նրա ձայնը լսում ես***

Քամին առաջանում է արևի ազդեցությունից: Արևը երկրի մակերեսը անհավասար ձևով է տաքացնում. որոշ վայրեր ավելի արագ են տաքանում, իսկ մյուսները՝ ավելի դանդաղ: Այդ ջերմաստիճանային տարբերության հետևանքով

առաջանում է օդային ճնշման տարբերություն, և օդը սկսում է շարժվել: Այդ շարժվող օդն էլ կոչվում է քամի:

Այսպիսով՝ Արևը տաքացնում է երկիրը

Տաք օդը բարձրանում է վեր

Սառը օդը գալիս է նրա տեղը

Օդի այս շարժումն առաջացնում է քամի

Հոգևոր իմաստով՝ ինչպես առանց արևի քամի չի լինում, այնպես էլ առանց Աստծո ներկայության և կրակի չի լինում Սուրբ Հոգու շարժումը մարդու կյանքում:

Աստվածաշունչը խոսում է չորս քամիների մասին՝ հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան քամիների:

1. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՔԱՄԻ – ՍԱՌԸ, ԴԺՎԱՐ և ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ: (NORTH)

Հյուսիսային քամին <u>անձրև</u> է բերում... և <u>ցուրտը</u>՝ հյուսիսային քամիներից (Առակաց 25.23, Հոբ 37.9):

Հովհաննես Մկրտչի կյանքում եկան հյուսիսային քամու սառը, դժվար և մեկուսացման շրջաններ:

Մատթեոս 3.11 – Ես ձեզ մկրտում եմ ջրով՝ ապաշխարության համար, բայց նա, ով գալիս է իմ

հետևից, ինձանից զորավոր է. ես արժանի չեմ անգամ նրա կոշիկները բռնելու: Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով ու կրակով:

Մատթեոս 11.3 – Դո՞ւ ես նա, որ գալու էր, թե՞ ուրիշի սպասենք:

Այն մարդը, ով մի ժամանակ վստահությամբ հայտարարում էր Մեսիայի գալուստը, հիմա պայքարում էր հարցերի, մենակության և դժվարության հետ:

2. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՔԱՄԻ – ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ և ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ (SOUTH)

Հոբ 37.17 – Գիտե՞ս, որ հագուստներդ տաքանում են, երբ երկիրը հարավի քամուց <u>հանգստանում</u> է:

Գործք 27.13 – Երբ մեղմ հարավային քամի փչեց, նրանք կարծեցին, թե արդեն հասել են իրենց նպատակին...

Ինչպես ներգործեց Հարավային Քամին

Հարավային մեղմ քամին ստեղծեց կեղծ ապահովության զգացում: Նավաստիները մտածեցին, թե եղանակը բարելավվել է, և կարող են շարունակել ճանապարհը:

*Բայց շատ շուտով Փոթորիկը բարձրացրեց «Եվրակյուղոն» կոչվող հզոր **հյուսիսարևելյան** քամին:*

3. ԱՐԵԼՅԱՆ ՔԱՄԻ – ԴԱՏԱՍՏԱՆ և ՈՒՂՂՈՒՄ (EAST)

Հովնան 1.4 – Բայց Տերը մի մեծ քամի հանեց ծովի վրա, և մեծ փոթորիկ եղավ ծովում, և նավը խորտակվելու վտանգի մեջ էր:

Հովնան 4.8 – Եվ երբ արեգակը ծագեց, այն ժամանակ Աստված սահմանեց արևելյան խորշակաբեր քամուն, և արևը հարվածեց Հովնանի գլխին: Նա թուլացավ, ուզում էր մեռնել և ասաց. Մեռնելս ապրելուցս լավ է:

Երբեմն Աստված թույլ է տալիս ցավոտ շրջաններ՝ մեզ ուղղելու համար:

Արևելյան քամին կարող է ցավոտ լինել, բայց նույնիսկ այդ քամին Աստծո վերահսկողության տակ է:

Ելից 10.13 – Մովսեսը մեկնեց իր գավազանը Եգիպտոսի երկրի վրա, և Տերն ամբողջ այդ օրը և ամբողջ գիշերը արևելյան քամի բերեց երկրի վրա: Երբ առավոտ եղավ, արևելյան քամին բերեց մորեխներին:

Ելից 14.14, 21 – Տերը պիտի պատերազմի ձեզ համար, իսկ դուք հանգի՛ստ եղեք: Մովսեսը մեկնեց իր ձեռքը ծովի վրա: Տերն արևելյան սաստիկ քամիով ամբողջ գիշեր քշեց ծովը և ցամաքեցրեց այն, ու ջրերը ճեղքվեցին:

4. ԱՐԵՄՏՅԱՆ ՔԱՄԻ – ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (WEST)

Ելից 10.19 – Տերն արևմտյան սաստիկ մի հողմ ուղարկեց, որը մորեխն առավ ու քշեց Կարմիր ծովը: Եգիպտոսի բոլոր սահմաններում մի հատ մորեխ չմնաց:

Աստված նախ արևելյան քամի ուղարկեց՝ մորեխ բերելու համար, հետո արևմտյան քամի ուղարկեց՝ դրանք հեռացնելու համար:

Նույն Աստվածը, որ թույլ է տվել փոթորիկը, կարող է նաև հեռացնել այն:

Սաղմոս 78.26-27 – Նա երկնքում բարձրացրեց արևելյան քամին և իր զորությամբ մոտ բերեց հարավային քամին. Եվ փոշու պես միս թափեց նրանց վրա և ծովի ավազի պես՝ թևավոր թռչուններ.

Այն, ինչ թվում էր կործանում, Աստված կարող է դարձնել մատակարարում:

Սաղմոս 148.8 – Փոթորկալից քամիները կատարում են Նրա խոսքը:

ՔԱՄԻՆ ՈՒՐ ՈՒԶՈՒՄ Է, ՓՉՈՒՄ Է, և ՆՐԱ <u>ՁԱՅՆԸ ԼՍՈՒՄ ԵՍ</u>...

Մարկոս 4.39 – Նա, արթնանալով, քամուն սաստեց ու լճին ասաց. «Լռի՛ր, հանդարտվի՛ր»: Եվ քամին դադարեց, ու կատարյալ խաղաղություն տիրեց:

*Բ Թագ. 22.1-4 – **1** Այդ օրը Դավիթն ասաց Տիրոջը այս երգի խոսքերը, երբ Տերը նրան ազատել էր իր բոլոր թշնամիների ձեռքից և Սավուղի ձեռքից: **2** Նա ասաց. Տերն իմ վեմը, իմ բերդն ու իմ ազատարարն է: **3** Աստված իմ ժայռն է, և ես նրա մեջ եմ ապաստան գտնում, Իմ վահանը և իմ փրկության եղջյուրը, իմ բարձր աշտարակն է ու իմ ապաստանը, Իմ ազատիչը. դու ես անիրավությունից ազատում ինձ: **4** Ես կանչում եմ Տիրոջը, որ փառաբանության է արժանի, Եվ պիտի ազատվեմ իմ թշնամիներից:*

***11** Նա երևաց հողմի թևերի վրա:*

*Եսայի 59.19 – Երբ թշնամին հեղեղի պես գա, Տիրոջ **Հոգին (roaḥ, շունչը)** դրոշ պիտի բարձրացնի նրա դեմ:*

*Ծննդոց 2.7 – նրա ռունգերի մեջ կենդանության **<u>շունչ փչեց</u>**, և մարդը կենդանի հոգի եղավ:*

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՔԱՄԻՆ ԿՅԱՆՔ Է ԲԵՐՈՒՄ

Եզեկիել 37 – Չոր Ոսկորների Հովիտը

Սուրբ Հոգին վերականգնում է կոտրված բաները:

*Եզեկիել 37.9 – Եվ ինձ ասաց. **Մարգարեացի՛ր շնչին**, մարգարեացի՛ր, ո՛վ մարդու որդի, և ասա՛ շնչին. Այսպես է ասում Տեր Աստված. **Աշխարհի չորս հովերից ե՛կ, ո՛վ շունչ**, և փչի՛ր այս սպանվածների վրա, որ կենդանանան:*

Աստված Եզեկիելին ասաց՝ոչ թե մեկ քամուն կանչիր, այլ՝ «չորս քամիներին»:

Ինչո՞ւ:

Որովհետև Սուրբ Հոգին օգտագործում է կյանքի բոլոր եղանակները՝ դժվարությունը, ցավը, մխիթարությունը, ազատագրումը, փորձությունը, և օրհնությունը, մարդուն կենդանացնելու և վերականգնելու համար:

Հարցը հետևվյալն է

«Կարո՞ղ են այս ոսկորները կենդանանալ»:

ԴԱՐՁԻ՛Ր ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎՈՐԴ

8 Քամին ուր ուզում է, փչում է, և նրա ձայնը լսում ես,

Քամին պարզապես օդի շարժումն է բարձր ճնշումից դեպի ցածր ճնշում:

ՊԵՆՏԵԿՈՍՏԵ – ՔԱՄԻՆ ԵԿԱՎ

*Գործք Առաքելոց 2.1-2 – **1** Եվ Պենտեկոստեի օրը բոլորը **միասին գտնվում էին նույն տեղում:** **2** Հանկարծ երկնքից սաստիկ քամու պես մի ձայն հնչեց և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին:*

***3** Եվ նրանց երևացին բաժանված հրե լեզուներ, որոնք նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: **4** Բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ նրանց խոսել էր տալիս Հոգին:*

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՍԻՐՏԸ ՔԱՄՈՒ ՀԱՄԱՐ

Գործք 2.38–39 – Ապաշխարիր, Մկրտվիր, Ընդունիր Սուրբ Հոգին...

Այս խոստումը դեռ այսօր էլ ուժի մեջ է:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: